ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԸ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՁԵՎՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԳՅՈՒՂԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԿԱՌՈՒՅՑ» ՀԻՄՆԱՐԿԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-Ի N 461-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Պետական գույքի կառավարման կոմիտե	13.01.2025թ. N ---
Հայտնում ենք, որ նախագծի նախաբանում հղում է կատարվում «Համայնքային կառավարչական հիմնարկների մասին» օրենքի 17-րդ հոդվածին: Համաձայն «Համայնքային կառավարչական հիմնարկների մասին» օրենքի 1-ին հոդվածի՝ օրենքը սահմանում է համայնքային կառավարչական հիմնարկների իրավական վիճակը, դրանց ստեղծման, գործունեության, վերակազմակերպման և գործունեության կարգը: Հաշվի առնելով վերը նշվածը՝ անհրաժեշտ է նախագծի հիմնավորման մեջ նշել, թե արդյոք «Գյուղական ֆինանսավորման կառույց» պետական հիմնարկը	Ընդունվել է:

հանդիսանում է համայնքային կառավարչական հիմնարկ, թե ոչ, կամ փոխել նախագծի հղումը:	
2. ՀՀ ֆինանսների նախարարություն	24.01.2025թ. N**01/9-2/1071-2025**
1. վերակազմավորման դեպքում պարտադիր պայման է կազմակերպաիրավական ձևի փոփոխությունը, սակայն Նախագծով փոփոխվում է միայն պետական հիմնարկի անվանումը, հետևաբար վերակազմակերպում փաստացի չի իրականացվում: Ավելին՝ նկատի ունենալով, որ հիմնարկներն իրավաբանական անձի կարգավիճակ չունեն, դրանց վերակազմավորման իրավական հնարավորությունն ինքնին բացակայում է:	Չի ընդունվել Սուն նախագծով ոչ միայն փոփոխվում է պետական հիմնարկի անվանումը, այլև գործառույթները: ՀՀ Էկոնոմիկայի նախարարության Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ («ԳՏՏՋ ԾԻԳ») ՊՀ-ի ծրագրերն ամբողջությամբ ավարտվել են, փակման աշխատանքները կատարվել են: Սակայն ԳՖԿ-ն շարունակում է գործել որպես հիմնարկի առանձնացված կառույց, «ԳՏՏՋ ԾԻԳ» ՊՀ-ի կանոնադրությանը կից՝ ԳՖԿ-ի Կանոնադրություն-ուղեցույցի և միջազգային համաձայնագրերի կարգավորումների հիման վրա: Այդ իսկ պատճառով նպատակահարմար է «ԳՏՏՋ ԾԻԳ» ՊՀ-ը վերակազմավորման ձևով ԳՖԿ հիմնարկի վերակազմակերպելը և ոչ թե կազմակերպաիրավական ձևը փոխելը: ԳՖԿ-ն գործում է հետևյալ միջազգային համաձայնագրերի հիման վրա. • Հայաստանի Հանրապետության և ԳՋՄՀ-ի միջև՝ 2005 թվականի հունվարի 28-ին կնքված՝ ԳՏՏՋ -վարկ 653 AM

	• 2013 թվականի նոյեմբերի 29-ին կնքված՝ ԳԿՍ - Դրամաշնորհ COFIN-DK-817-AM • 2014 թվականի նոյեմբերի 12-ին կնքված՝ ԵԳՖԱԾ - Վարկ 2000000779, Դրամաշնորհ 2000000780: Նշված միջազգային համաձայնագրերով սահմանվում են ԳՖԿ-ի կանոնադրությունը և վերաֆինանսավորման գործառույթները: Համաձայն այդ կարգավորումների ֆոնդերը պետք է շրջանառվեն ԳՖԿ-ի կողմից նույն մեխանիզմներով, ինչպես ամրագրված է համաձայնագրերում: Որպես հիմնարկ վերակազմակերպման արդյունքում միայն ԳՖԿ-ն կարող է շարունակել իր գործառույթների իրականացումը, ինչպես նաև նախատեսվում են նոր գործառույթների փոխանցում ԳՖԿ-ին՝ մասնավորապես տնտեսության արդիականացման ծրագրի իրականացումը:
2. Նախագծով բացահայտված չէ, թե ինչ միջոցների հաշվին է ապահովվելու ԳՖԿ-ի պահպանման ծախսերի ֆինանսավորումը:	Ընդունվել է:
3. Նախագծի N 1 հավելվածով հաստատվող կանոնադրության «2. Հիմնարկի գործունեության ոլորտներն ու նպատակները» բաժնում ԳՖԿ-ի գործառույթների և խնդիրների շարքում նաև ներկայացվել է, որ ԳՖԿ-ն միջազգային աուդիտորական	Ընդունվել է:

կազմակերպությունների կողմից անցնում է տարեկան արտաքին աուդիտ (7-րդ կետի 13-րդ ենթակետ): Այս կապակցությամբ, բացահայտման կարիք ունի ԳՖԿ-ի տարեկան արտաքին աուդիտ անցնելու վերաբերյալ դրույթը ԳՖԿ-ի գործառույթների և խնդիրների ներքո նախատեսելու հանգամանքը:	
4. Միաժամանակ խմբագրական առումով հայտնում ենք. ա/ Նախագծի նախաբանում որպես լիազորող նորմ հղում է կատարվում «Համայնքային կառավարչական հիմնարկների մասին» օրենքին, սակայն Նախագծով նախատեսված հարաբերությունները դուրս են տվյալ օրենքի կարգավորման առարկայի շրջանակներից: բ/ Հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջը, Նախագծի 7-րդ կետում անհրաժեշտ է նշել իրավական ակտի լրիվ անվանումը:	Ընդունվել է: Ընդունվել է: